



Հակոբ Պարոնյան

Խիկար

Խիկարի հետ

ՄԵՐ ԽԻԿԱՐՆ ԱԼ ԱԼԱՖՐԱՆԿԱ Է ԵՂԵՐ

Պոնժուր, պոնժուր, մոնսիո, քոմա՞ն թալէ վոյ, քոմա՞ն վա լա սանթէ:

Աստծոյ բարին: Ատ ի՞նչ կերպարանք է, Խիկար, ակնոց, պասթոն, ալաֆրանկա ես եղեր:

Էյէ լոնէոր տը բարլէ ան ֆրանսէ, մոնսիո, ան ֆրանսէ, ան ֆրանսէ, քոմբրընէ՞ վոյ, օ՛հ, լը ֆրանսէ, օ՛հ, լա ֆրանսէզ:

Խենդեցա՞ր, ի՞նչ եղար, Խիկար:

Ժը նը վոյ քոմբրան, մուշու, մը քոմբրընէ՞ վու4:

Բայց հայերէն խօսէ, որ հասկնամ:

Ես ա՛լ ալաֆրանկա եղայ, հա՛, հասկցա՞ր, եւ ալաֆրանկա ըլլողի մը համար հայերէն լեզուն քիչ կու գայ: Իլ ֆո բարլէ ան ֆրանսէ, մոն շեր, ահ, մոն շեր, թիեն, մոն շեր, տոնէ մուս տեօ մեճիտիէ, մոն շեր: Նայէ, ի՛նչ անուշութիւն կայ արտասանութեան մէջ:

Հայերէնին մէջ չկա՞յ այդ անուշութիւնը:

Չկայ, հապա, օրինակի համար, ինձի երկու մեճիտիէ տուր:

Վրաս չունիմ:

Չէ՛, այսինքն՝ օրինակի համար, ինձի երկու մեճիտիէ տուր ըսես նէ՛ հայերէնին մէջ պաղ կու գայ կոր, թանտիս քան ֆրանսէ տոնէ մուս տեօ մեճիտիէ, կարծես որ անուշութիւն մը կայ:

Միտքդ ի՞նչ է, երկու մեճիտիէ՞ կ'ուզես:

Չէ:

Ի՞նչ գիտնամ հապա. մոն շեր, թիեն մոն շեր, ահ, մոն շեր, տոնէ մուս տեօ մեճիտիէ, մոն շեր կ'ըսես նէ...

Ալաֆրանկա եղողները այդ խօսքերը շատ կը գործածեն տէ, ես ալ իբրեւ օրինակ գործածեցի:

Ըսել է որ այս ալաֆրանկա երիտասարդները դէմերնուն ելնողէն ստակ կ'ուզեն կոր:

Կ'ուզեն կոր, հապա, ալաֆրանկա ըլլալէն ետքը ինչո՞ւ չուզեն, ալաֆրանկայի մէջ ստակ առնելն ու չտալն ամօթ չեն սեպեր կոր. բայց հայերէն լեզուով ուզես նէ՛ չեն տար կոր, որովհետեւ հայերէն խօսիլը մեծ ամօթ կը սեպեն կոր: Անցեալ օր ազնուական ըսուած ընտանիքներուն մէկուն մէջ կը գտնուէի: Տասնի չափ երիտասարդներ եւ երիտասարդուհիներ նստած իրարու հետ ֆրանսերէն կը խօսէին կոր, ես ալ խօսակցութեան խառնուելու համար երկու խօսք ըրի հայերէն, ասոր վրայ ամենքն իրարու ըսել սկսան. ահ, մոն շեր, ահ, մա շեր, սէթ էոն սովաժ, սէթ էոն կրանթ անիմալ: Հարցուցի որ ի՞նչ կը խօսիք կոր ինձի համար, օրիորդներէն մէկը կարմրելով ըսաւ՝ թէ կ'ըսեն կոր որ դուն շատ քաղաքավար եւ ազնիւ մարդ մ'ես: Այս խօսքին վրայ կրակոտ երիտասարդին մէկը ոտք ելլալով ըսաւ. մոն շեր, պեն էֆքեար սերպեսթիյինի սեւերիմ, պիր ինսան սերպեսթ տիւշինմելի վէ սեյլեմելի, շու ճիհեթլէ Խիկար էշէք աստամ տըր, սիւիլիզասիոնտան պէ խապար, բրոկրետեն պիպեիրէ Էոքիւզ միսալի պիր մախլուդ տըր քի արապայա գոշմագտան պաշգա պիր շեյլէ եարամագ:

Ճեսարեթիմէ աֆվ Էտինիզ, Խիկա՛ր, պեն տողրույու սեօյլեր պիր ատամըմ,
պունտան մատէ, պիր խասթալըղը կիզլի թութարսաք իլաճընը պուլամայըզ,
պունուն իչին սենին հալին սենտեն սագլարսաք օ հալտէ գալըրսըն, Էվվեթ. սեն
պիր աւանակ սըն, լաքին ըիճա իտերիմ, կիճենմեյին, Էվիմիզէ կելմիշսին սանա
րայեթ իթմէք պորճումուզ տուր, նասըլ քի րայեթտէ գուսուր Էթմեյորուզ գաննըմ,
պիզ միսաֆիր սեւեր ատամլարըզ, շու հալտէ սեն թերպիյեսիզ, ահմազ,
եապանի, տիւնեատան պէ խապար պիր մախլուքսուն, լաքին բարտոն,
կիճենմեյին, տերտ սեյլենմետիքճէ տերման պուլունմազ. պեն սենի սեւտիյիմտեն
սեյլեյորում, պու ճիւմլէ րայեթիտէ Էլտեն պրագմայորում, Էվվեթ, ատամ
սըրասընա կեչմեք իսթերսեն, պու քըյաֆեթինի տեյիշիպ, սեթրի բանթալոն
կիյիպ, կեօզլիք, պասթոն քուլանմալըսըն, Էրմենիճէ լաքըրտըր ասլա
Էթմենլիսին, իշտէ օ վագըթ ֆամիլեալար իչինէ կիրերսին, մատմագելլերիլեն
քոնուշուպ կիլեր օյնարսըն, կեզերսին, կիտերսին, կելիրսին:

Ասոր պէս խել մը խօսքեր ալ ըսաւ, բայց ողջ ըլլայ, միշտ ներումն խնդրելով ըսաւ
եւ պէտք եղած յարգանքներն ալ ըրաւ: Ես ալ հետեւեալ առտուն շիտակ պիթ
բագար գացի, միւս հագուստներս ծախեցի եւ ասոնք առի: Դուն իմին տեղս
ըլլայիր նէ՝ ալաֆրանկա չէ՞իր ըլլար, մոն շեր, թիեն, մոն շեր, ահ, մոն շեր, տոնէ
մուս տեօ մեճիտիէ, մոն շեր:

Այնչափ անվայել խօսքեր ըրին նէ՝ չբարկացա՞ր:

Բարկանալու ժամանակ չեն տար կոր որ, աւանակ ըսելնուն պէս՝ ետեւէն
ներումն կը խնդրենք, կ'ըսեն կոր, ե՞րբ բարկանամ: Ալաֆրանկան սա
աղէկութիւնն ալ ունի, որ դիմացինիդ ուզածիդ չափ կը հայիոյես կոր ու ներեցէք
ըսելուդ պէս՝ դիմացինիդ ալ յօշը կու գայ կոր, բերանը չը բանար կոր: Մեր մէջ
ըլլայ նէ՝ ան անոր կը գարնէ, ան անոր կոկորդը կը սխմէ ու կոիւ կ'ելլայ. ալ
այսչափ առաւելութիւն տեսնելէն ետքը ինչո՞ւ ալաթուրքային պոչը բռնեմ երթամ:

Ալաֆրանկա ըլլալու համար նախ ի՞նչ պէտք է:

Նախ պէտք է հայերէն չխօսիլ, հայերէն խօսողներէն հեռու փախչիլ:

Ի՞նչ լեզու գործածելու է:

Ֆրանսերեն, տաճկերեն, յունարեն, հրեաերեն, չինկեաներեն. հայերեն չըլլայ տէ՛
ինչ ըլլայ նէ՛ ըլլայ: Երկրորդ՝ պէտք է քիչ մը թեթեւ ըլլալ, իգական սեռէն հեռու
չփախչիլ, կարելի եղածին չափ տիկիներն ու օրիորդները յարգել. անոնց առջեւ
կապիկի պէս ցատկոտել, կոտրել, կոտորտոյիլ: Երրորդ՝ ծանր չըլլալ: Չորրորդ՝
ասկից անկից ստակ ուզել, մանիքեթ առնել, ակնոց առնել:

Դուն մէկէ մը ստակ ուզեցի՞ր:

Ալաֆրանկա ըլլալէս ի վեր տասը մեճիտիէ տոյի անոր ասոր:

Դուն ալ չուզե՞ս:

Ես աղէկ մը չկրցի վարժուիլ տէ, դժուար կու գայ կոր: Հինգերորդ՝ պէտք է որ
ամէն առտու բուտրա քսես երեսդ, ասոնք չընես ալ նէ՛ կ'ըլլայ, բայց թեթեւութիւնը
անպատճառ ընելու ես: Մոռցայ ըսելու, որ անունդ ալ ֆրանսերէն պիտի դնես.
Գէորգ ես նէ՛ Ժորժ պիտի ըլլաս, Կարապետ ես նէ՛ Շարլ կամ Քարլո:
Ահաւասիկ այսչափ է: Վուալայ, մոն շեր, ահ, մոն շեր, թիեն, մոն շեր, թիեն, մոն
շեր, տոնէ մուս անօ մեճիտիէ, մոն շեր: Ի՞նչպէս, աղէկ կ'ընե՞մ կոր:

Գէշ չէ:

Եկուր քիչ մ'ալ բոլքա խաղանք քեզի հետ:

Գրասենեակին մէջ բոլքա կը խաղցուի՞, բա՛նդ գնա, ձեռագիր գրեմ պիտի:

Եկուր խաղանք, եկո՛ւր, չէ նէ՛ օտապաշին կամ ուրիշ մէկը գտիր, որ խաղամ,
որովհետեւ այս գիշեր սուարէ տանսանք մը կայ, ես ալ հրաւիրուած եմ, բոլքա
պիտի խաղամ, քիչ մը վարժութիւն պէտք է:

Ի՞նչ վարժութիւն պիտի ընես:

Սա վարժութիւնը պիտի ընեմ, որ տամային ձեռքը ի՞նչպէս սխմելու է, որ
ուրիշները չտեսնան:

Խիկա՛ր, դուն ալաֆրանկային վնասակար կողմերը սորվեր ես:

Հիմնական գործածուածը սորվեցայ: Ահ, մոն շեր, թիեն մոն շեր, տոնէ մուա տեօ մեճիտիէ, մոն շեր: Ատիէո, մոն շեր, ժը վու սալյու, մոն շեր, ժը լոնէոր տը վու սալյուէ, մոն շեր, վու գաւէ լոնէոր տը վու գեթրը սալիւէ, մոն շեր, ահ, մոն շեր, տոնէ մուա տեօ մեճիտիէ, մոն շեր, ասոնք են ահա հիմնական գործածուած ալաֆրանկա խօսքերը:

Աստուած շնորհք տա յ:

Մեր երիտասարդներուն:

ԱԶԳ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Խիկա՛ր, ուրբաթ օրը ընդի. ժողովին պիտի երթա՞ս:

Չէ՛, պարապ խօսքեր մտիկ ընելու ժամանակ չունիմ:

Ինչո՞ւ պարապ ըլլան, կը բողոքեն, կ'առաջարկեն, բենը կ'ելնեն, ատենաբանութիւն կ'ընեն, դուն ձախակողմեան ես, ես աջակողմեան եմ, խօսքս սխալ արձանագրուած է, շտկեցէք, արեցէք ըսելով...

Ազգին ծառայութիւն կ'ընեն, այնպէս չէ՞, արդեօք երեսփոխան էֆենտիները գոնէ հիմա սկսա՞ն ամչնալ՝ համոզուելով, որ տասներեօթը տարիէ ի վեր խեղճ ազգի մը գլխուն անցած՝ չնչին եւ տղայական խնդիրներով զբաղելով՝ ազգին մէջ դաստիարակութեան ծաւալման արգելք եղան. համոզուեցա՞ն արդեօք, որ տասներեօթը տարուան մէջ ազգին ամենափոքր ծառայութիւն մը ըրած չեն:

Անոնց հոգն անգամ չէ, աշխարհ կործանի, աշխարհ վերականգնի նէ՝ հարիւր տասներեօթը տարի ալ այսպէս պիտի շարունակեն:

ԿԱՆՈՆԱԻՈՐՆԵՐՈՒՆ ԱՆԿԱՆՈՆՈՒԹԻՒՆԸ

Բարի՛ եկար, Խիկա՛ր, Վանէ՞ն կու գաս:

Չէ, Վանէն չեմ գար, բայց ինչո՞ւ հարցուցիր:

Գլուխդ ֆէս եւ ոտքդ ոտքի աման շտեասյ ու կարծեցի, որ Վանէն կու գաս:

Վանեցիները ֆէս ու ոտքի աման չե՞ն հագնիր:

Չէ:

Գլուխ չունի՞ն, ոտք չունի՞ն:

Ինչո՞ւ պիտի չունենան. Վանեցիները մեր ազգային իշխանութիւնը կարծեցիր. գլուխ ալ ունին, ոտք ալ ունին, բայց գլուխնին բաց պտտիլ սկսան...

Ալաֆրանկա՞ր ըլլալու համար...

Ոտքի աման ալ չգործածել սկսան...

Ոտքի ամաններու վրայ ալ տո՞ւրք դրուեցաւ, թէ կառավարութիւնը հարուստներու ձիերը առած ըլլալով՝ աղքատներն ալ ոտքի ամանները տալու որոշում տուին:

Ոչ մին եւ ոչ միւսը:

Ինչո՞ւ ուրեմն առանց ֆէսի եւ ոտքի ամանի կը պտտին:

Որովհետեւ Վանայ մէջ գտնուած կանոնաւոր գօրքերը դէմերնին ելնողներուն ոտքի ամաններն ու ֆէսերը կը յափշտակեն եւ իրենք կը գործածեն եղեր: Գիւղերը մտնալով գտածնին կ'առնեն եղեր. դասատուներուն փայտ կրել կու տան եղեր:

Կանոնաւոր գօրքերը...

Արանց եւ կանանց, ծերոց եւ տղայոց ամէն տեսակ չարիք կ'ընեն եղեր:

Կանոնաւոր գօրքերը...

Վանէն գրուած նամակի մը նայելով, մարդ չհամարձակիր եղեր դուրս ելնելու:

Կանոնաւոր գօրքերը:

Այո՛, կանոնաւոր գօրքերը:

Կանոնին այսչափ վնասները տեսնուիլէն ետքը, ինչո՞ւ կանոնը չեն վերցնէր այդ գօրաց մէջէն:

Ո՛վ գիտէ: Բայց ի՞նչպէս կ'ըլլայ, որ տեղական կառավարութիւնը թող կ'ուտայ որ...

Տեղական կառավարութիւնը հո՞ն է մի:

Հոն է եա՛ւ . .

Ի՞նչ գիտնամ, այդ ըսածներդ լսեցի նէ՛ կարծեցի, որ տեղական կառավարութիւնը այդ գօրաց ձեռքն է:

Չէ, բայց կը զարմանամ, թէ կուսակալը ի՞նչպէս ձայն չհաներ:

Ինչէ՞ն գիտես, որ այդ խեղճին ալ ոտքի ամաններն ու ֆէսը չեն առած:

Բայց ինչո՞ւ ձայն չհաներ:

Ինչէ՞ն գիտես, որ գօրքերը անոր ձայնն ալ չեն առած, քանի որ կ'ըսեն՝ թէ ամէն գտածնին կ'առնեն ու կը տանին:

Ներեցէ՛ք, Խիկար, ձեզի բան մը պիտի յիշեցունեմ, որովհետեւ քու յիշողութիւնդ տկար է:

Պարտքի մասին տկար, իսկ առնելիքի մասին խիստ զօրաւոր է, կ'ըսէր ատենօր Սոկրատը ծաղրող կատակերգուն: Յիշեցուցէք:

Կը խոստովանի՞ք ուրեմն, թէ պարտքի մասին տկար է յիշողութիւննիդ...

Այո՛, ըստ տիրող սովորութեան:

Ուստի ես ալ ձեր մէկ պարտքը պիտի յիշեցունեմ ձեզի, այն է, թէ լեզունիդ քիչ մը չափաւորեցէք եւ այնպէս խօսեցէք:

Ես ամիս մը խորհեցայ եւ գործածելիք լեզուս որոշեցի, եւ ի՞նչ ըսի որ: Վանէն Մանգումէին գրուած նամակի մը ըսածները պատմեցիր ինձի, ես ալ անոնց վրայօք հարցումներ ըրի:

Այո՛, բայց եւ այնպէս...

Մանաւանդ որ Հայաստանի մէջ գործուած անիրաւութիւնները օսմանեան երեսփոխանական ժողովին մէջ ալ վաւերացուեցան միաձայն հաւանութեամբ:

Այո՛, բայց եւ այնպէս...

Ցաւերնիս յայտնելու ենք, որ բարեխնամ կառավարութիւնը իմանայ եւ հարցունէ Վանայ կուսակալին, թէ ի՞նչ կ'ընէ ան տեղը: Եթէ ասկից առաջ ունենայինք խօսելու հիմակուան ազատութիւնը, գոր Սահմանադրութիւնը շնորհեց մեզի, այս հարստահարութիւնները շատոնց կը վերնային:

Այո՛, բայց եւ այնպէս... ի՞նչ հարկ կայ... ըսէ՛ ինձի, եթէ Վանէն չես գար՝ ի՞նչ եղան ուրեմն ֆէսդ ու ոտքի ամաններդ:

Երէկ իրիկուն մեծ ընկերութեան մը մէջ վիսթ խաղացի, բարեկա՛մ:

Հասկցայ, ազնուական չերքեզներու հանդիպեր ես:

Այո՛, մնաք բարով:

Երթաք բարով, չորեքշաբթի կը սպասեմ:

Կու գամ:

ԽԻԿԱՐԻՆ ԵՐԱՋԸ

Բարի՛ եկար, հայր Խիկար:

Բարո՛վ տեսանք, ինձի աթոռ մը տուր, գէշութիւն եկաւ վրաս... պիտի մարիմ...

Պիտի մարի՞ս... մարելու ի՞նչ կայ, խելքդ գլուխդ բեր, բաղնիքի մէջ չենք...

Հիմա մարելու համար ելնելու ջուրերը երթալու չէ ա՛, հոս ալ կրնամ մարիլ...
լիմոն բերէ՛ք:

Բայց ինչո՞ւ պիտի մարիք...

Խաղաղութեան հաստատ մնալուն համար պիտի մարիմ, որովհետեւ քառասուն
օր է ծոմ կը բռնեմ կոր եւ խաղաղութիւն չունիմ, շո՛ւտ ըրէք, լիմոնը:

Վարդապե՛տ պիտի ըլլայիր, որ քառասուն օր ծոմ բռներ ես:

Ստակ մը չմնաց վրաս:

Պաշի պոգուխներո՞ւն հանդիպեցար:

Այո՛, առանց գործի մնացի. անգործութիւնը անանկ պաշի պոգուխ մ'է, որ
մարդուս վրայ բան չթողուր. լիմոնը տո՛ւր:

Ինչո՞ւ անգործ մնացիր:

Անոր համար, որ շիտակ լուր բերողներուն ստակ տուող չկայ, օրը հարիւր սուտ
կ'ելլայ կոր:

Կերակուր բերէք Խիկարին:

Շնորհակալ եմ, Աստուած գիս Թատրոնէն չգատէ:

Խօսէ՛ տեսնենք, երեք ամիս ի՞նչ ըրիր:

Յիսուն օր քնացայ, քառասուն օր ալ ասդին անդին պտտեցայ:

Քունդ պարա՛պ անցուցիր:

Չէ, քունիս մէջ բաւական բաներ տեսայ, շատ անգամ ալ քեզի հետ տեսնուեցայ, քուկին միտքդ չգա՞ր կոր աշտարակին վրայ խօսելինիս:

Չէ:

Կեցի՛ր, համառօտիւ պատմեմ ուրեմն:

Գիշեր մը ժամը երեք ու կէսին միջոցները Թովհանէին առջեւ ձի մը հեծայ եւ սկսայ վազել դէպի երկինք. Աստուած բարին կատարէ:

Միրիճին ալ ետեւէն կը վազէ՞ր կոր:

Մինչեւ որ ստակը չառնեն նէ՝ անոնք ձիուն պոչէն կը բաժնուի՞ն:

Բարձրանալով բարձրացայ եւ երկնքին երեսը գտնուող գիսաւոր աստղի մը պոչէն բռնեցի. Աստուած բարին կատարէ: Այս միջոցին հիւսիսը սկսաւ սաստկաշունչ փչել. ես ալ գիսաւորին պոչին փաթըթուած սկսայ օդին մէջ տարուբերիլ հիւսիսէն դէպի արեւմուտք, արեւմուտքէն դէպի հիւսիս: Հիւսիսային կողմը նուագածուին մէկը առջեւը նոթայ մը առած, վրան նայելով խաղ մը կը կանչէր. արեւմտեան կողմն ալ երկու երեք հոգի նստած՝ օքերայ կ'երգէին: Էհ, կ'ըսէի մտքովս, դուք խաղ կանչեցէք, ես ասանկ օդի մէջ պարեմ: Այս խօսքս լմնցնելու չմնաց, այդ երեք հոգիներէն մէկը ձեռքը լուսթրոճիկի վրձին մը բռնած՝ եկաւ ասդիկի մարդուն առջեւի նոթային վրայ քսելով՝ արեց գայն: Աս արուելուն պէս՝ գիսաւորին պոչը բրթաւ եւ ես ալ ինքզինքս աշտարակ իմը վրայ տեսայ. Աստուած բարին կատարէ: Բնական է, որ աշտարակի վրայ մնալն ամէլի քիչ վախ կու տայ մարդուս՝ քան օդի մէջ տարուբերիլը. ուստի սիրտս քիչ մը հանգստացաւ: Աշտարակէն վար նայեցայ, որ ամէն ազգէ շատ մը գործաւորներ իրարու հետ կը խօսէին, առանց իրարու խօսք հասկնալու. այս տեսածիս պէս՝ ըսի մտքովս, ընդհանուր ժողով գումարուեր է հոս, սահմանադրութեան վերաքննութեան վրայ վիճաբանելու համար. սակայն, կ'ըսէի, օտարականներն ի՞նչ գործ ունին այս ժողովին մէջ:

Այդ օտարականներն ի՞նչ գործ ունին եղեր հոն:

Այդ կէտը հասկնալու վրայ էի, երբ գրեց տեսայ եւ ուրախութենէս արթնցայ:

Քու արթննալէդ ետքը, օտարականներն հոն մնացի՞ն, կ'ըսես:

Չեմ կարծեր, իմ արթննալէս ետքը ամենն ալ ցրուած ըլլալու են:

Ինչէ՞ն գիտես:

Անկից գիտեմ, որ հրէային մէկը խօսք կ'ուզեմ, խօսք կ'ուզեմ ըսելով՝ արիւն քրտինքի մէջ մտաւ եւ իրեն ոչ թէ միայն խօսք չտրուեցաւ, այլ ի կարգ հրաւիրուեցաւ սա յայտարարութեամբ, որ եթէ անգամ մ'ալ խօսք ուզէ՝ պաշտօնէն կ'իյնայ:

Ակռաներդ սխմելով չէի՞ր կրնար քիչ մ'ալ քնանալ եւ սա բազմութեան ինչ ըրածն աղէկ մը հասկնալ:

Թող կու տա՞ն մարդուս, որ ուզածին չափ երագէ:

Յիսուն օրուան մէջ ուրիշ երագ չտեսա՞ր:

Շատ երագ տեսայ. ամենն ալ մէկ օրուան մէջ պատմել կ'ըլլա՞յ. մնացածներն ալ մէկիկ մէկիկ կը պատմեն:

Գալ շաբթու կը սպասեմ:

Շատ աղէկ:

ԽԻԿԱՐՆ ԿՐՕՆԱԻՈՐ

Վերջապէս, հայր Խիկար, ըսածդ կատարեցիր ու կրօնատր եղար:

Ի՞նչ ընէի, ուրիշ ճամբայ չկար. ինձի սրկէ սուրճ մը ապսպրէ :

Շատ աղէկ, ի՞նչպէս էք, նայինք:

Փառք Աստուծոյ, սա ծխախոտդ տուր:

Հրամանեցէ՛ք, ազգային ի՞նչ լուր ունիս նայինք:

Ի՞նչուս պէտք իմին ազգային լուր, սա կրակը տո՛ւր:

Հրամանեցէ՛ք, հա՛յր, ի՞նչպէս ժամանակ կ'անցունէք կոր, նայինք:

Ի՞նչպէս պիտի ըլլայ, վարդապետ մը ի՞նչպէս կեանք կրնայ անցունել,
ծանօթներուս տունը կ'երթամ, կերակուրս բարեկամներուս տունը կ'ուտեմ,
ցերեկները կը քնանամ, գիշերները կը քնանամ... սա տեղ ճաշարան կայ նէ՝
ինձի կերակուր ապսպրէիք:

Գլխուս վրայ. տղա՛յ, գնա՛ վարպետին ըսէ, որ վարդապետին կերակուր բերէ:
Թաղին վարժարանը ի՞նչպէս կ'երթայ կոր:

Իրաւ որ հարցուցած չունիմ, հարցունելու ժամանակ ալ չունիմ: Սա ծխախոտող
տայիր... սա անցնողները ո՞վ են:

Չեմ ճանչնար:

Շնորհալի ընտանիքի մը կը նմանին կոր, տղան ալ ի՛նչ սիրուն է:

Հրամանեցէ՛ք, հա՛յր, կերակուրը բերի:

Ծօ տղա՛յ, աս խորովածին քանի՞ դուրուշ կ'առնէք:

Չորս դուրուշ, հա՛յր:

Գնա՛, թշուառական, վարդապետներուն համար չէ ա՛, ես ստակ մը չեմ տար,
վաղը հայրդ մեռնելու ըլլայ նէ՝ կը թաղեմ, ես ալ ան ատեն ստակ չեմ ուզեր:

Ի՞նչ կ'ըսէք, վարդապե՛տ:

Գործդ գնա՛, ես գիտեմ ըսածս, սրկէ շիշ մը գինի բեր:

Շատ աղէկ, կը բերեմ:

Հայր Խիկար, չըսէ՞ք, ազգային գործերուն վրայօք ի՞նչ կարծիք ունիք:

Մոռցանք ըսելու տղուն, որ քիչ մը բիլաւ բերէ:

Ա՛րսենք. ազգային գործերն ի՞նչպէս կ'երթան կոր:

Բիլաւն ալ ցերեկ ատեն ծանր չնստիր մի եա՛ւ. մաքարոնին աւելի աղէկ է կարծեմ. բժիշկներն ալ խրատ կու տան, որ մաքարոնի ուտենք:

Ուզածդ բերել կու տանք: Երեսփոխանական ժողովին կ'երթա՞ք երբեմն:

Ծօ տղա՛յ, լաքերթայով գինին ի՛նչ աղուոր կ'երթայ կոր, գիտե՞ս, անցեալ գիշեր չայիմէն առի կէս օխայ, սակայն պատուական բան էր:

Այո՛, աղէկ կ'ուտտի. Կրօն. ժողովն ի՞նչ ջուրի վրայ է:

Սակայն հետը քիչ մ'ալ սոխ ըլլալու է:

Եկայ, հա՛յր, ուրիշ բան մ'ալ կ'ուզե՞ք:

Էհ, քիչ մը էքմէք քատայիֆի ըլլայ նե՛ գէշ չըլլար:

Հիմա կը բերեմ, վարդապետ:

Իզմիրի խնդիրը ի՞նչ եղաւ, հայր Խիկար:

Նոր վերարկու մը կ'ուզեմ կոր շինել տալ, սա խանը բարեկամներ ունիմ, երթամ նայիմ խումաշը ձրի կրնա՞մ փրցունել:

Հայաստանի մէջ հարստահարութիւններ կ'ըլլան կոր եղեր:

Խումաշը ձրի առնեմ նե՛ կարողչէքը մեծ բան մը չէ:

Լսեցի, որ վարդապետները Պոլիսէն պիտի հանեն ու վանքերը պիտի դրկեն եղեր:

Ի՞նչ ըսիր, վարդապետները Պոլիսէն պիտի հանեն վանքերը մի պիտի դրկեն, ըլլալո՞ւ բան է աս, մեր ազգին մէջ տակաւին վարդապետներու արժէքը

ճանչցուած չէ եւ ասոր համար է, որ ազգերնիս ետ ետ կ'երթայ կոր... խեղճ վարդապետները վանքերը երթան ի՞նչ ընեն... ո՞վ է աս որոշումը տուողը... ո՞ր ժողովքին մէջ խօսքը անցեր է:

Իրաւ որ չգիտեմ:

Անանկ է նէ՛ սա կերակուրս ուտեմ ու վազելով պատրիարքարան իջնամ սա լուրը ստուգեմ, ասանկ բան մը իրաւ կայ նէ՛ վարդապետութիւնը լմնցաւ: Մնաք բարով, մնաք բարո՛վ, կու գամ, Տէր ընդ ձեզ:

Ե՞րբ կու գաք նորէն, հայր:

Գալ շաբթու: